

ՀՏԴ 1751

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

**ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆ ՈՐՊԵՍ
ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ
Նալբանդյան Ն. Ա.**

Սույն հոդվածում մասնավորապես քննվում է հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան որպես լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական կոմպետենցիաների ամբողջություն: Այն իր մեջ ներառում է գիտելիքներ և կարողություններ, որոնք միտված են ստեղծելու խոսքային սեփական հաղորդակցություն և շփման տարբեր իրավիճակներ աշակերտների համար: Առանձնակի կարևորվում է նաև արտալեզվական կոմպետենցիայի դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում, առանց որի դժվար է պատկերացնել որևէ հաղորդակցական գործընթաց:

Բանալի բառեր. հաղորդակցական-լեզվական կոմպետենցիա, հանրալեզվաբանական կոմպետենցիա, գործաբանական կոմպետենցիա, արտալեզվական կոմպետենցիա, շեմային մակարդակ:

Հոդվածի հիմքում ընկած է «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի» (CEFR) կողմից մշակված տեսությունները, ըստ որոնց՝ լեզուների ուսուցումը ենթադրում է այն հիմնական կոմպետենցիաների զարգացումը, ինչպիսիք են՝ լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական, սակայն Դ. Հայմզը իր դիտարկումներում անդրադառնում է արտալեզվական կոմպետենցիային՝ որպես լեզուների ուսուցման կարևորագույն բաղադրիչի [12]:

Այս տեսակետն էլ հավանության է արժանացել մեր կողմից, որը մասնավորապես քննվել է հոդվածում:

Հոդվածի նպատակն է լեզուների ուսուցման գործընթացում կարևորել CEFR-ի կողմից առաջադրվող լեզվական-հաղորդակցական կոմպետենցիայի զարգացումը օտար լեզուների ուսուցման գործընթացում՝ միևնույն ժամանակ չանտեսելով արտալեզվական

կոմպետենցիայի դերը հաղորդակցվելիս, որը հանդիսանում է վերջինիս կարևորագույն բաղադրատարրը:

Օտար լեզվով հաղորդակցվելու համար կարևորվում է ոչ միայն լեզվական, այլ նաև հանրալեզվական և գործաբանական գիտելիքների իմացությունը: Այսինքն՝ արդյունավետ գրույց ունենալու համար քերականական, բառապաշարային և հնչյունաբանական գիտելիքներից զատ անհրաժեշտ է ցուցաբերել պատշաճ վարքագիծ, գիտելիքներ խոսքի գործընթացի մասին: Այնուամենայնիվ, ոչ պակաս ուշագրավ է արտալեզվական կոմպետենցիայի տիրապետումը, որն իր առանձնահատուկ նշանակությունն ունի արդյունավետ հաղորդակցման իրականացման գործում: Այս ամենով է պայմանավորված սույն հոդվածի **արդիականությունը**:

Աշակերտի՝ **լեզվական կոմպետենցիայի** տեսանկյունից անհրաժեշտ է կարևորել ոչ միայն գիտելիքների ծավալը և որակը, այլև գիտելիքների մտապահման ձևերը և դրանց մատչելիությունը:

Հանրալեզվաբանական կոմպետենցիան իր մեջ ներառում է լեզվի կիրառման սոցիալ-մշակութային բաղադրիչը: Այս համատեքստում հատկանշական է ուսուցման գործընթացում աշակերտների լեզվական կարողությունների ճշգրիտ կիրառումը լեզվական տարբեր իրավիճակներում:

Ինչ վերաբերում է **գործաբանական կոմպետենցիային**, ապա այն առնչվում է այս կամ այն լեզվամշակութային հանրության հաղորդակցական նորմերի և ավանդույթների հետ:

Այս համատեքստում իր ուրույն դերն ունի նաև **արտալեզվական կոմպետենցիան**, առանց որի չի կարող իրականանալ ոչ մի իրական շփում:

Օտար լեզվի ոլորտում **հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան (communicative language competence)** չի նշանակում միայն երկու անձանց մտքերի բանավոր փոխանակում, այլև ներառում է փոխներգործուն խոսքային գործունեության բաղադրամասերի մի ամբողջություն:

Օտար լեզուներ ուսուցանելիս հաղորդակցության զարգացումն ընդգրկում է մի շարք մտավոր գործընթացներ՝ նոր տեղեկատվության ընկալում, մտապահում, ճանաչում, ինչպես նաև մշակում ու փոխանցում: Դրանցից յուրաքանչյուրը ֆիզիկական և մտավոր ունակությունների և գործողությունների համադրություն է՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ սովորողի տարիքը, մտավոր

ներուծը, աշխարհայացքը, ընդհանուր հաղորդակցական-լեզվական գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվազգացողությունը և այլն:

Ինչ վերաբերում է հաղորդակցական-լեզվական կոմպետենցիային, ապա այս թեման ամբողջովին ընդգրկված է «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի» (CEFR) կողմից մշակված տեսություններում, որտեղ հստակ նշվում է. «Լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան կարող է դիտարկվել որպես մի շարք բաղադրիչների ամբողջություն. **լեզվական (linguistic), հանրալեզվաբանական (socio-linguistic) և գործարանական (pragmatic)**, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ընդգրկում է գիտելիքներ, կարողություններ և հմտություններ» [2, 15-16]:

Ըստ էության՝ «**լեզվական կոմպետենցիա**» եզրույթն ինքնին հարաբերական է, քանի որ՝

1. տարբեր մշակութակիրներ ունեն լեզվի ճիշտ կիրառման իրենց պատկերացումները,
2. յուրաքանչյուր էթնիկ խումբ մշակել է լեզվական կոմպետենցիան գնահատելու իր մեխանիզմը,
3. հաղորդակցման ընթացքում ցուցաբերած կոմպետենցիայի մակարդակը կարող է տարբերվել՝ կախված հաղորդակցության նպատակներից:

Վ. Ի. Կարասիկի կողմից նույնպես դասակարգվել է լեզվական կոմպետենցիայի մի քանի դրսևորում՝

- լեզվի իրական իմացություն,
- կրթված և ոչ կիրթ լեզվակիրների լեզվական կոմպետենցիա,
- լեզվակիրների ու օտարալեզու խոսողների լեզվական կոմպետենցիա,
- լեզվակիրների և փորձագետների լեզվական կոմպետենցիա [7, 63-64]:

Լեզվական կոմպետենցիան ներառում է բաղադրիչներ, որոնք շատ կարևոր են լեզվի դասավանդման մեթոդիկայում: Դրանք կապված են լեզվի և մտածողության, քերականության և բառապաշարի հետ:

Այս համատեքստում կարելի է հավելել, որ լեզվական կոմպետենցիա ասելով՝ հասկանում ենք քերականական ճիշտ ձևերի և շարահյուսական կառույցների կիրառման կարողություններ: Առանց բառերի և քերականական ձևերի իմացության, իմաստալից արտահայտությունների կազմման որևէ հաղորդակցման մասին խոսք լինել չի կարող [10]:

Ինչպես հայտնի է, լեզվական կոմպետենցիան առնչվում է լեզվի համակարգի, այսինքն՝ բառապաշարային, հնչյունաբանական, շարահյուսական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Տիրապետելով այս կոմպետենցիային՝ հնարավոր է կազմել իմաստավից նախադասություններ:

Ինչ վերաբերում է **հանրալեզվաբանական կոմպետենցիային (sociolinguistic competence)**, ապա վերջինս ենթադրում է գիտելիքներ հանրամշակութային կանոնների վերաբերյալ, այն է՝ իմանալ, թե ինչպես կիրառել լեզուն պատշաճ ձևով: Պատշաճությունը կախված է հաղորդակցման վայրից, թեմայից և հաղորդակցվողների միջև եղած հարաբերություններից: Ավելին, լինել պատշաճ՝ նշանակում է իմանալ օտար մշակույթի խոհրդանիշները, որ պարագայում ինչ քաղաքավարության նորմեր կիրառել, ինչպես համապատասխան վերաբերմունք ցուցաբերել, օրինակ՝ հարգանքի, հեզմանքի, ակնածանքի, երախտագիտության դեպքում:

Ա. Վ. Գլուխովան հանրալեզվաբանական կոմպետենցիան դիտարկում է որպես աշակերտների կողմից լեզվական միջոցների իրացման կարողություն որոշակի լեզվական իրադրությունում: Այստեղ նա կարևորում է բառի և բառակապակցության իմաստավորումները՝ կապված հաղորդակցման ձևից և ոճից, ինչպես նաև հաղորդակցման գործնական նպատակից [4, 206]:

Ըստ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի (CEFR)՝ հանրալեզվաբանական կոմպետենցիան առնչվում է լեզվի օգտագործման սոցիալ-մշակութային պայմաններին [2, 16]:

Ա. Արշակյանն այն կարծիքին է, որ հանրալեզվաբանական կոմպետենցիան վերաբերում է լեզվական ձևերի միջև եղած հարաբերությունների նշանակություններին, նրանց իմաստին, որը տարբերվում է լեզվական իրազեկության պարունակած իմաստից: Եթե վերջինս հենվում է լեզվական նշանների միջև եղած կապի և նրանց պայմանական (խոսքաշարից դուրս) նշանակության վրա, ապա հանրալեզվաբանական կոմպետենցիան ճշգրտում է լեզվական նշանների և նրանց նշանակյալի միջև եղած կապը խոսքաշարում կամ տվյալ իրադրությունում: Այս իրազեկության բաղկացուցիչ մասերից է «կազմված» հաղորդակցական մտադրության համապատասխան խոսքաշարում կիրառումը [1, 83-84]:

Գործարանական կոմպետենցիան (pragmatic competence) առնչվում է լեզվական պաշարների գործառնական կիրառման հետ «լեզվական

գործառույթի իրագործում, խոսքային ակտ՝ հաղորդակցական փոխներգործության մեխանիզմներին համապատասխան [2, 15-16]:

Վերը նշվածի լույսի ներքո կարելի է ենթադրել, որ գործաբանական կոմպետենցիան հաղորդակցական վարքագծի համապարփակ տիրապետում է, որը տվյալ լեզվակիր ժողովրդի հաղորդակցական նորմերի և ավանդույթների ընդհանրությունն է և ներկայացնում է այս կամ այն լեզվամշակութային հանրությունը:


Այլ կերպ ասած՝ գործաբանական կոմպետենցիան կարողություն է, որը թույլ է տալիս հաղորդակցվելիս ճիշտ կողմնորոշվել, հաշվի առնել զրուցակցի կարծիքը, կիրառել առավել պատշաճ արտահայտչամիջոցներ՝ ելնելով շփման պայմաններից և նպատակներից:

Հաղորդակցական կոմպետենցիային (communicative competence) անդրադարձել են նաև մի շատ հետազոտողներ՝ Ա. Ա. Լեոնտևը, Ի. Ա. Զիննյայան, Մ. Ն. Վատյուտնևը, Բ. Մ. Պոլոնսկին, Օ. Մ. Կազարցևան, ովքեր այն կարծիքին են, որ վերջինս խոսքային գործունեություն իրականացնելու կարողություն է: Սա ենթադրում է հարցեր առաջադրելու և դրանց պատասխանները հստակ ձևավորելու, ուշադիր լսելու և առկա խնդիրները ակտիվ քննարկելու, զրուցակցի արտահայտած մտքերը մեկնաբանելու և քննադատական գնահատական տալու կարողություն, ինչպես նաև կարողություն՝ սեփական կարծիքը հիմնավորելու, լսելու և այլ մասնակիցների կարծիքները լսելու և ընկալելու [8], [5], [3], [9], [6]:

Ինչպես պատկերված է գծապատկերում, Դ. Հայմզը դիտարկել է մի կադապար, որն առավել լայն շրջանակներ է ընդգրկել: Վերջինիս կարծիքով մտավոր գործունեության արդյունքը մի շարք կարողությունների և հմտությունների շնորհիվ արտացոլվում է սոցիալական իրականության մեջ [12]:

Հայմզի տեսակետն առավել ընդունելի է, քանի որ չենք կարող չսահմանազատել լեզվական կոմպետենցիան արտալեզվականից, որն իր առանձնահատուկ դերն ունի միջանձնային հարաբերություններում:

Հատկապես, երբ առանցքում դպրոցն է, ապա արտալեզվական հաղորդակցության այն հիմնական բաղադրիչները՝ աչքերի և դեմքի արտահայտությունները, մտքեր փոխանակելիս կարևորագույն գործիքակազմ են: Հմուտ ուսուցիչը աշակերտի դեմքի արտահայտությունից կռահում է՝ արդյոք սովորել է դասը, թե՞ ոչ, նոր նյութը հասկանալի է, թե՞ ոչ, ասվածի մեջ ճշմարտություն կա, թե՞ ոչ:



Գծապատկեր 1. Հաղորդակցական կոմպետենցիայի կաղապար [12]

Ձ. Մակքեյը իր հետազոտություններում առանձնակի քննության է առնում արտալեզվական կոմպետենցիայի զարգացման դերը դասապրոցեսի ընթացքում, քանի որ աշակերտները նախ և առաջ արձագանքում են ուսուցչի արտալեզվական խոսքին: Օրվա դասի տրամադրությունը կերտվում է առաջին մի քանի րոպեների ընթացքում, երբ ուսուցիչները և աշակերտները բնագոյաբար կողմնորոշվում են, թե ինչպես պետք է հաղորդակցման սկիզբը դրվի: Ուսուցչի դեմքի արտահայտությունը, ձայնը, շարժումները և ժեստերը կարող են վստահություն ներշնչել և հակառակը [13, 54]:

Ուստի ցանկալի կլիներ, որ օտար լեզվի ուսուցիչները հավասարապես կարևորություն տային արտալեզվական միջոցների տիրապետմանն ու կիրառմանը դասապրոցեսին՝ հատկապես ավագ դպրոցում, երբ աշակերտները դերային խաղեր են ներկայացնում կամ իրականացնում են քննարկումներ: Արտալեզվական միջոցներից առանձնացրել ենք առավել գործնական տարբերակները.

1. դիմային արտահայտությունների կիրառում (գայրույթ, տխրություն, ուրախություն, վախ, արհամարհանք և այլն),

2. ժեստերի կիրառում (մատնացույց անել, բարևել կամ ցտեսություն մաղթել և այլն),
3. աչքերի հայացք, որը կարող է արտահայտել հետաքրքրություն, հիացմունք, վստահություն, ինչպես նաև խաբեություն և անտարբերություն,
4. պատկերներ և առարկաներ, որոնք կարող են որոշակի տեղեկություն փոխանցել տվյալ անձի կամ առարկայի մասին:

Հետևաբար, կարելի է փաստել, որ լեզվական-հաղորդակցական կոմպետենցիայի միջոցով կարելի է հիմնարար գիտելիքներ փոխանցել աշակերտներին, մինչդեռ արտալեզվական կարողությունները բացահայտում են, թե ով ենք մենք, ինչպես ենք հաղորդակցվում այլ անձանց հետ: Հաճախ է խոսվում այն մասին, թե ինչպես լեզու դասավանդող ուսուցչին հեշտությամբ կարելի է տարբերել ժեստերով, որոնք նա կիրառում է խոսակցության ընթացքում:

Ամփոփելով՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան ներառում է գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են սովորողներին՝ ստեղծելու խոսքային վարքագծի սեփական ծրագրեր և համապատասխան շփման իրավիճակներ: Վերջինս խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետումն է, ինչպես նաև հաղորդակցման գործընթացում սովորողի պատշաճ դրսևորման կարողություն՝ կախված հաղորդակցման պայմաններից:

Սակայն ոչ պակաս կարևորություն է ներկայացնում արտալեզվական կոմպետենցիան ուսուցման գործընթացում: Եթե լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան թույլ է տալիս հաղորդակցվող կողմերին ստեղծել արդյունավետ շփում, ապա արտալեզվական կոմպետենցիայի դեպքում շփումն իրականանում է հաղորդակցվողների կողմից առանց խոսքի ուղերձ փոխանցելու կամ ընդունելու միջոցով:

КОММУНИКАТИВНАЯ ЯЗЫКОВАЯ КОМПЕТЕНТЦИЯ КАК ОСНОВНАЯ ЦЕЛЬ ОБУЧЕНИЯ ЯЗЫКАМ

Налбандян Н. А.

В настоящей статье рассматривается коммуникативная языковая компетенция как комплекс языковых, социолингвистических и прагматических компетенций. Коммуникативная языковая компетенция

включает в себя знания и умения, необходимые коммуникативным субъектам для создания собственного речевого общения, а также соответствующих коммуникативных ситуаций. Особое значение имеет роль невербальной компетенции в процессе обучения иностранному языку, без которой невозможно представить какой-либо процесс общения.

Ключевые слова: коммуникативная языковая компетенция, социолингвистическая компетенция, прагматическая компетенция, невербальная компетенция, пороговый уровень.

COMMUNICATIVE LANGUAGE COMPETENCE AS A MAIN GOAL OF TEACHING LANGUAGES

Nalbandian N. A.

The present article deals with communicative language competence as an embodiment of linguistic, sociolinguistic and pragmatic competences. It comprises knowledge and abilities necessary for the illocutors to frame their own speeches and to create appropriate communicative situations. Of particular importance is the role of non-verbal competence in the process of teaching a foreign language, without which it is impossible to imagine any process of communication.

Keywords: communicative language competence, socio-linguistic competence, pragmatic competence, non-verbal competence, threshold level.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արշակյան Ա. Բանավոր հաղորդակցության կարողությունների զարգացման ուղիները Եվրախորհրդի լեզվաքաղաքականության համատեքստում // «Կանթեղ»: Գիտական հոդվածների ժողովածու: 2005: № 4: Էջ 82-87:
2. Լեզուների իմացության/իրագրելության համեմատական համակարգ. ուսումնառություն: դասավանդում: գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոլյան: թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշներ: խմբ.՝ Ս. Զոլյան: Ս. Աստվածատրյան և ուրիշներ: Ե.: «Նորք» գրատուն: 2005: 293 էջ:
3. Вятютнев М. Н. Понятие языковой компетенции в лингвистике и методике преподавания иностранных языков // Иностранные языки в школе. 1975. № 6. С. 55-64.

4. Глухова А. В. Социально-культурный конфликт как фактор современного политического процесса.// Логос. 2005. №4. С. 201-215.
5. Зимняя И. А. Психологические аспекты обучения говорению на иностранном языке. Москва. Просвещение. 1978. 159 с.
6. Казарцева О. М. Культура речевого общения: теория и практика обучения : учеб.пособие / О. М. Казарцева. М.: Флинта. Наука. 1998. 496 с.
7. Карасик В. И Язык социального статуса: социолингвистический аспект. Прагмалингвистический аспект. Лингвосемантический аспект. М.: Гнозис. 2002. 333 с.
8. Леонтьев А. А. Педагогическое общение. М.: Знание, 1979. 47 с.
9. Полонский В. М. Словарь по образованию и педагогике [Текст] / В. М. Полонский. М. : Высшая школа. 2004. 512. с.
10. Пороговый уровень. Русский язык. Т. I. Повседневное общение / Под. ред. О. Д. Митрофановой. Страсбург: Совет Европы пресс. 1996. 264 с.
11. Соловова Е. Н. Методика обучения иностранным языкам: Базовый курс лекций. М.: Просвещение, 2002. 239 с.
12. Hymes D. On Communicative Competence. Pride, J.B., Holmes, J. (eds). Sociolinguistics: Selected Readings. -London, Penguin, 1972. P. 269-293.
13. Mackay J. Coat of many pockets: Managing classroom interactions. Australia: Aust Council for Ed Research. 2006. 122 p.

Տեղեկություններ հեղինակի մասին

Նալբանդյան Ն. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու
 Շիրակի պետական համալսարան
 Էլ. փոստ՝ nalbnelly@mail.ru

Տրվել է խմբագրություն 10.10.2019